

Սկսելով Ձեր Նոր Մատակարարին Հետ



Ծիշդ ձևով սկսիլ

Նոր մատակարարի հետ ձեր առաջին հանդիպումին շատ կարևոր է, որ անոր ներկայացնէք ինչ կը սպասէք իրմէ: Լաւագոյն ձեռք այն է, որ խօսիք եղած դժուար խնդիրներու մասին նախքան գործի սկսիլը:

Այն քանի մը բաները, որոնց մասին կ'ուզէիք խօսիլ ձեր մատակարարին հետ կը գտնէք վարը:

- **Արտօնուած աշխատանքներու վերանայում**

Բացատրեցէք այն աշխատանքները, զորս մատակարարը պիտի կատարէ ձեզի համար և թէ որքան ժամանակ ան կրնայ տրամադրել ամէն մէկ աշխատանքի վրայ: Քաունթին ձեզի կը դրկէ արտօնուած աշխատանքներուն ցանկը, ինչպէս նաև արտօնուած ժամերուն քանակը՝ երբ անոնք կը լիազօրեն կամ կը փոխեն ձեր ժամերը: Անպայման բացատրեցէք ձեր մատակարարին, թէ ինչպէ՞ս կը նախընտրէք, որ աշխատանքները կատարուին:

- **Առողջական խնդիրներ**

Տեղեակ պահեցէք ձեր մատակարարը ձեր ակերթիներուն մասին, սննդեղէնի մասնաւոր պահանջներու և մասնաւոր հոգատարութիւն պահանջող ուրիշ հարցերու մասին:

- **Վարակիչ հիւանդութիւններ**

Ամէնաճիշդն այն է, որ դուք և ձեր մատակարարը զիրար տեղեկացնէք, եթէ վարակիչ հիւանդութիւններ ունիք, ներառեալ HIV, Hepatitis, թոքախտ և այլ հիւանդութիւններ:

- **Պահեստներ**

Տոյց տուր մատակարարին պահեստին տեղը և թէ ինչպէ՞ս ան կրնայ աշխատցնել գործիքները:

- **Դեղեր**

Բացատրէ, թէ ի՞նչ օգնութեան պէտք ունիս և թուարկէ օրուան դեղերդ առնելու ժամերը:



- **Շտապ օգնության տեղեկություն**

Տուր այն բոլոր տեղեկությունները, որ պետք է գիտնայ մատակարար արտակարգ դեպքի մը պարագային: Անոր ըստ, թե արտակարգ դեպքի ատեն որո՞ւն լուր տալ, նաև՝ ինչպե՞ս տունեն դուրս ելլել: Արտակարգ դրուժեան բացատրութիւնները միշտ դրէք դիւրին գտնուող տեղ մը:

- **Գործի ժամանակացոյց**

Յստակացուր, թէ մատակարարը ո՞ր օրերուն պիտի գայ և իւրաքանչիւր օր քանի՞ ժամ պիտի աշխատի: Որոշեցէք ձև մը՝ արձանագրելու ժամերը այնպէս մը, որ վստահ ըլլաք, որ ժամաքարթը ճիշդ լեցուի: Նկատի առէք գործածել օրացոյց կամ տետրակ՝ ամէն օր աշխատցուած ժամերը և կատարուած աշխատանքները արձանագրելու համար:

- **Կապ պահելու տուեալներ**

Իրարու փոխանցէք ձեր բոլոր հեռաձայններու թիւերը, ո՞ւր կրնան գտնել ձեզի և իրարու հետ կապուելու յարմարագոյն ժամանակը:



- **Բժշկական ժամադրութիւններու փոխադրամիջոց և յանձնարարութիւններ**

IHSS-ը չի վճարեր պենզինի, ինքնաշարժի ապահովագրութեան կամ հանրային փոխադրամիջոցներու համար: Յստակացուր, թէ ո՞վ պիտի վճարէ այդ ծախսերը, ինչպէս նաև՝ ձեր մատակարարը ունենայ ինքնաշարժի ապահովագրութիւն և ինքնաշարժ վարելու վաւերական իրաւունք:

